Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2019
«Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցման» ծրագրի ավարտի արարողություն

2021թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ «Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցման» ծրագրի 84,120 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը, Եղեգիս համայնքի ղեկավար պարոն Արթուր Ստեփանյանը, Հորս համայնքի ղեկավար պարոն Շմավոն Արագուլյանը, «Բեզոար» բնապահպանական կազմակերպության ծրագրի համակարգող պարոն Սամվել Գեղամյանը ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սույն ծրագրի շրջանակներում, Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում կառուցվել է ոռոգման ջրատար՝ չոր եղանակային պայմաններում համայնքին ոռոգման ջուր մատակարարելու նպատակով: Ծրագրի արդյունքում Հորս համայնքում ավելի քան 420 մարդ ունի ոռոգման ջրի կայուն մատակարարում:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Գեղամյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը իրենց ներդրման և վստահության համար, որի արդյունքում «Բեզոար» ՀԿ-ն Հորս համայնքում հաջողությամբ ավարտեց ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցումը:

Իր հերթին դեսպան Ֆուկուշիման շեշտեց, որ հատկապես ուրախ է իմանալ, որ ծրագրի արդյունքում Հորս համայնքում ավելի քան 420 մարդ արդեն ունի ոռոգման ջրի կայուն մատակարարում: Հաշվի առնելով գյուղատնտեսության կարևորագույն դերը Հայաստանի տնտեսական զարգացման գործում՝ այս ծրագիրը լիովին համահունչ է Հայաստանի կառավարության գերակայություններին, այն է՝ բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը՝ բարելավելով ոռոգման ջրի հասանելիության մակարդակը:

Վայոց Ձորի մարզպետ պարոն Գրիգորյանը, նախ շնորհավորեց դեսպան Ֆուկուշիմային Հայաստանում Ճապոնիայի դեսպանի պատասխանատու առաքելությունը ստանձնելու կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ նա իր բացառիկ նպաստը կունենա հայ-ճապոնական հարաբերությունների ամրապնդման գործում: Պարոն Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի դեսպանին և Ճապոնիայի Կառավարությանը, ծրագրի հաջող իրականացման կապակցությամբ, որը ոչ միայն համայնքի բնակիչներին չոր եղանակային պայմաններում ապահովելու է ոռոգման ջրով, այլև նպաստելու է շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության պահպանմանը:

Արարողության ավարտին համայնքի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին դեսպան Ֆուկուշիմային և Ճապոնիայի կառավարությանը՝ ներդրման համար:

Լեռան վերին հատվածում տեղադրված ջրամբարից ջուրը հոսում է ստորոտում գտնվող ջրամբար

Պարոն Գեղամյանը դեսպան Ֆուկուշիմային ցույց է տալիս ջրամբարը

Դրամաշնորհային աջակցության վահանակի բացման ժամանակ

Դեսպան Ֆուկուշիման, մարզպետ Գրիգորյանն և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները դրամաշնորհային աջակցության վահանակի բացումից հետո

Դեսպան Ֆուկուշիմայի շնորհավորական ուղերձը

Վայոց Ձորի մարզպետ պարոն Գրիգորյանի ելույթը